ՏՆՕՐԵՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի՛ ընթերցող,

այս համարով՝ ՀՊՏՀ նախաձեռնությամբ և օժանդակությամբ, մեկնարկում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի պարբերական տեղեկագրի հրապարակման գործնական փուլը: Իրականություն է դառնում մի նախագիծ, որը, ուղեղային կենտրոնի հեղինակության ամրապնդման և ճանաչելիության շրջանակի ընդլայնումից բացի, ունի կարևոր մի առաքելություն՝ էապես նպաստել մասնագիտական հետազոտությունների և վերլուծությունների լսարանի ընդարձակմանը՝ մատչելի և ընկալելի աշխատանքների մատուցմամբ:

Տեղեկագրի թեմաների ընտրության և ներկայացման այս կարևոր սկզբունքի որդեգրումը հնարավորություն կընձեռի ոչ միայն մասնագիտական տիրույթում, այլև հանրության տարբեր շերտերում և գիտական ու ուսումնական տարբեր հաստատություններում ձեռք բերելու ընթերցողների մեծաթիվ բանակ:

Թեմաների ընտրությունը կատարվելու է հստակ դիրքորոշմամբ, այն է՝ հանրությանն ու մասնագիտական շերտերին հուզող հարցերի և հիմնախնդիրների վերհանում, որոնց լուծման ուղղությամբ հանրային մտքի մասնակցայնությունը դեռևս ցանկալի մակարդակում չէ, և, հետևապես, տեղեկագիրը պետք է դիտարկել ոչ միայն որպես տեղեկությունների տրամադրման գործիք, այլև բանավեճի յուրօրինակ հարթակ, որի միջոցով կարող են իրականացվել ինչպես թեմատիկ լսումներ, այնպես էլ գիտաժողովներ և ընդլայնված խորհրդակցություններ:

Վստահ եմ՝ մեր նախաձեռնությունը կհաջողի, և արդյունքում տեղեկագիրն իր մշտական տեղը կգտնի Ձեր գրասեղանին:

Միաժամանակ, Կենտրոնի կայքի միջոցով փորձելու ենք ապահովել հետադարձ կապ և, այդ առումով, կունենանք նաև նոր ու հուզող թեմաների՝ Ձեր կողմից առաջարկման կառուցակարգ: Այսինքն՝ չենք բացառում, որ տեղեկագրի նյութերի ընտրությունը կարող է կատարվել Ձեր ակտիվ մասնակցությամբ: Հետևաբար՝ այս պարագայում Դուք ընթերցողից կարող եք վերածվել Պատվիրատուի և նաև Հոդվածագրի:

Մեր թիմը պատրաստ է համագործակցության և պատրաստական՝ տեղեկագրում էջեր տրամադրելու մեր երկրի ապագայի տեսլականի, տնտեսության զարգացման և այլ ուղղություններով Ձեր ստեղծագործ մտքի աշխատանքներին, եթե դրանք տեղավորվեն մեր հռչակած առաքելության և սկզբունքների շրջանակում:

Մաղթենք արգասաբեր աշխատանք միմյանց:

Ձեր բարեկամ ու գործընկեր՝ Դավիթ Հախվերդյան

Դավիթ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1995 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Էկոնոմիկայի պետական կարգավորում» մասնագիտությամբ, 1998 թ.՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի ասպիրանտուրան: 1999 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2013 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2016 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999-2001 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2019 թ. նշանակվել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն: Դասախոսում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Հեղինակ է 15 մենագրության և ավելի քան 70 գիտական հոդվածների ու զեկույցների: